

ՈՒՄՈՒՐԸ ԲՕԼԻԹԻԳԸՅՅԷ ՎԷ ՄԷՎԱՏՅԸ ՍԱՅԻՐԷ

Իրանութեան ազգեր ստեղծու-
 րը իշխն գիրքնի տէ ֆա Յ
 իքնի տէ ֆա 2, զի իւ-
 չիւնիւն զէ սայիւն զաւ-
 րա իշխն 1էր զա իրան սը-
 րասրեա գծու լմանա իւ-
 րանիւ ստեղծու ճգաւոր
 Մէշքու ազ իւ սայիւն
 Գալաթեա իննչէ մայի՛
 բազարաթեա վազը Կ. 29
 իրան լանանա իւրաբ-
 արտ 8. ֆաւստեա իսմի-
 նէ կէօեաւրիէ ձէօ արի :

ՆԻՒՄԷՐՈՒ 1983

170

140.929	211.766
140.930	211.848
140.932	331.888

Շու. աթիտէքի պէնտ պիղիմ մէք-
թէպէ՛ տէրքեար օլան սէրպէսթ էֆ-
քեարմըլա վէ կիտիլմիլէ բէք մու-
վաֆք օլտուղունտան, այնէն տէրճ
իտէրիլ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԻՆԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՆԿԱ-
ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԷՆ

Իզուր են այսքան խօսում մանկա-
վարժութեան մէջ սխառմաների և մե-
թօղների վերայ . . . Տգէտ, անկիրթ
ծնողների, կամ այն ծնողների համար,
որոնք զբաղուած են իրանց օրական
ապրուստի ճարելովը անմատչելի են
սխառմաները և մեթօղները . . . Իսկ
տարրական ուսումնարաններում, որ-
տեղ մանկավարժը ամէն րօպէ անմի-
ջական յարաբերութիւնների մէջ է
դանձում երեխաների հետ, նորան ու-
րիշ դժուարութիւններն են դատա-
հում, որոնք ստիպում են նորան մի
կողմ դնել առժամանակ դաստիարա-
կութեան ուսումնարանը բոլոր մե-
թօղները . . . Այդ պատահած դըժ-
ուարութիւնները երեխաների «տար-
բեր բնաւորութիւններն» են:

Մեթօղը և նորա բարի գործադ-
րութիւնը կորչում է, անհետանում է
երեխաների անհատական բնաւորու-
թեան առաջ, որը կամ բնական է, կամ
բնասանկան դաստիարակութենից
պատուաստուած է: Մանկավարժին
մնում է, երեխաների հետ ծանօթա-
նալով, ճշգրտութեամբ ուսումնասիրել
ամեն մէկի բնաւորութեան յատկու-
թիւնները և առանձնութիւնները, ուս-
տի ամեն մի երեխայի հետ վարվելով
հնարել, յարմարել և գործ դնել նորա
բնաւորութեան համեմատ դաստիար-
ակութեան այսինչ կամ այնինչ միջոց
. . . Միջոցը անհատական և միւս մի-
ջոցից տարբեր պիտի լինի, ինչպէս և
անհատական է և մէկ մէկից տարբեր
է իւրաքանչիւր երեխայի բնաւորու-
թիւնը:

Այդ պատճառով ստտիկ սխալ-
վում են նոքա, որոնք կարծում են,
թէ տարրական ուսումնարանը, որտեղ
դուք գործ ունէք երեխայի թարմ
մաքի հետ, որը ենթարկվում է ամե-
նածայրայից ազդեցութիւններին, —
սխալվում են, ասում եմ, նոքա, ո-
րոնք կարծում են թէ 50 երեխաներից
կազմված տարրական ուսումնարանը
կարող է կառավարել 10, 15, կամ
20 անձերով . . . Այդ պարուններից
ամեն մէկը թէ և ամենաօրինաւոր ման-
կավարժ լինէր, իր սեփական ուղղու-
թիւն է մտնում ուսումնարանը, անձ-
նական կերպով ազդում է երեխայի
սրտի և մտքի վերայ, և այդպէս ու-
րիշից տարբեր վարվելով խանգարում
է, արգելում է, ոչնչացնում է միւս
պտղաբեր ազդեցութիւնը:

Երեխան մի և նոյն ժամանակ գըտ-
վում է զանազան ազդեցութիւնների
տակ, — նա միանգամայն խառնվում է,
չփոթվում է, նա միջոց չունի զարգա-
նալ անհատապէս . . . Բայց, կասեն
ինձ, դուք որ պահանջում էք ձեզ հա-
մար մի ուսումնարանում երեխաների
վերայ ազդելու, նոցա բարոյական ուղ-
ղութիւն տալու լիակատար ազատու-
թիւնը, — ո՞վ է երաշխաւոր որ դուք
բնդունակ էք այդ պաշտօնը վարելու . . .

Երաշխաւորը փորձն է, պատասխա-
նում եմ ես . . . փորձեցէք մի տար-
րական ուսումնարանում մի տեսուչ նը-
շանակել, թողեցէք նորան վարվելու,
գործելու բոլորովին ազատ լինիլա-

տիւր, — համբերութեամբ ս դասեցէք
նորա բարոյական ազդեցութեան պը-
տուղներին, ուշադրութիւն դարձրէք
նորա գործունէութեան եղանակի վե-
րայ առանց նորան չնչին, ողորմելի և
զղուելի ինտրիգաներ անելու, առանց
նորա գործունէութեանը ամեն քայ-
լում արգելքներ դնելու . . . և եթէ
նա օգուտ չէ բերում, — փոխեցէք,
եթէ նորա գործունէութիւնը օգտա-
ւետ է, թողեցէք նորան իր տեղումը
. . . Բայց միայն, եթէ Աստուած էք
սիրում, մի խառնվէք նորա գործու-
նէութեան մէջ, մի խանգարէք նորան
իր պաշտօնը վարելում:

Մանկավարժներից ամեն մէկը իր
գործունէութեան, իր վարմունքի ե-
ղանակներն ունի: Այդ բաւական չէ
. . . մեզանից ամեն մէկը իր խօսելու
երեխայի վերայ նախելու ձևերն ունի
. . . Եւ այդ չնչին բան չէ: Մէկը
ծաղր է անում չար երեխային, միւսը
խիստ, բայց քսողը նկատողութիւն
ներ է անում, որ տեղ նա աշխատում
է դիմել երեխայի խղճմանը, եր-
րորդը ծանր դէմքով խիստ և չոր նը-
կատողութիւն է անում, չորրորդը ձայն
է բարձրացնում երեխային յանդիմա-
մանութիւն անելով . . .

Երեխան երկար ժամանակ, դեռևս
անհատական ուղղութեանը չհասած,
ենթարկվում է քրտաքին աշխարհի ե-
րեւոյթներին, երեխան այն րօպէից բու-
կեցած, երբ զարթնում է նորա մէջ
հասկացողութեան նշոյլը, հաւատա-
րիմ արձագանք է դառնում իրան չըր-
ջապատող արտաքին աշխարհի թէ բա-
րոյական թէ ֆիզիքական երեւոյթնե-
րի: Սա է երեխայի «զարգացումը»: Երե-
խային դաստիարակել, նշանակում
է «բնտրութեամբ» առաջարկել նորան
այնպիսի «միջոցները», որոնք նորան
թէ մարմնական, թէ բարոյական եւ
մտաւոր հետեւաբար զարգացմանը նը-
պաստէին:

Եթէ երեխայի թարմ մտքի վերայ
այնպէս մեծ ազդեցութիւն ունին ար-
տաքին աշխարհի երեւոյթները, պէ՛տք
է և մեծ ազդեցութիւն ունենայ նորա
վերայ բարոյական օրինակը . . . Ու-
սումնարանի մէջ երախայի ոգին, որ-
պէս հայելին յղջացնելով նորան չըր-
ջապատող երեւոյթները, սկսում է ար-
տայայտել իր մէջ չըլնանի բոլոր յատ-
կութիւնները իր պակասութիւններով
և արժանաւորութիւններով: Մի կող-
մից մանկավարժի վարմունքի եղանա-
կը տպաւորում է երեխայի վերայ, միւս
կողմից անհետք չեն անցնում թարմ
և դիւրամունդ սրտի համար բնկեր-
ների բնաւորութեան յատկութիւննե-
րը և նոցա վարմունքը, երեխայի մեա-
քի վերայ բազմատեսակ երեւոյթների
անկապ, անկարգ տպաւորութիւնը
անհուշտ վնասակար կարող է լինել:
Մանկավարժից է կախված կարգի դը-
յել, դասաւորել, երեխայի համար
«անկատելի», բայց խիստ սխառմա-
կան կերպով, առաջարկել և մեկնել
բարոյական ճշմարտութիւնները, յար-
մարեցնելով, տարբեր բնաւորութիւն-
ներին . . .

Հասկանալի է թէ ինչ խառնակու-
թիւն պիտի ծագի, երբ երեխայի կա-
նոնաւոր, մանկավարժական պաշտօ-
նականտարութիւնը մի անձի տեղ յա-
ճեն կառնեն 10, 15, կամ 20 մարդ . . .

Տեսուչը մի տարրական ուսումնա-

րանի մէջ ոչ թէ միայն կառավարիչ է
և ուսումնարանի կարգապահական և
կառավարչական մասի հսկող, — այլ
գլխաւորապէս «մանկավարժ» է: Նա
ոչ թէ միայն արտաքին բարեկարգու-
թեան վերայ պիտի հոգայ (1), բայց
պիտի աշխատէ երեխաների հետ բա-
րոյական անմիջական յարաբերութիւն-
ների մէջ մտնել, պէ՛տք է աշխատէ նո-
ցա ուղղել, զարգացնել, դիմելով դէ-
պի նոցա խղճմանը, զարթեցնելով
երեխաների մէջ, նոցա համար անը-
կատելի կերպով, պարտաւորութեան
ճանաչութիւնը: Օրինակ նա պատժում
է յանցաւոր երեխային, զգուշութեամբ
բնտրելով պատժի ձևը, — բայց մի և
նոյն ժամանակ նա պատժի վերայ առ-
հասարակ պիտի նայէ, որպէս երեխան
ուղղելու անցաւոր միջոցի վերայ . . .
նորա նպատակը պիտի լինի վերցնել
ժամանակով պատժները ուսումնարա-
նից, և այնտեղ հասցնել երեխային,
որ շարունակ զարգացնելով նորա մէջ
խղճմանը և բարոյական պարտաւո-
րութեան ճանաչողութեան զգացմուն-
քը, երեխան պատժից չլիանաւորվի
պարտաւորութիւնը համարի խղճմա-
ւոր խօստովանել իր յանցանքը . . .

Կարո՞ղ են արգեօք իրագործվել
այդ սկզբունքները մի ուսումնարա-
նում, որտեղ մի ուղղութեան, մի հըս-
կող, և սխառմայ տուող կամքի տեղ,
10 կամ 20 ուղղութիւն և կամք են իշ-
խում: Մանկավարժութիւնը առհա-
սարակ մեծ վնաս է համարում, երբ
սկզբնական դաստիարակութեան մէջ
թէ բարոյական կրթութեան, թէ ա-
ռարկաների դասաւորութեան կողմից
«միութիւն չկայ»:

Առողջ մանկավարժութիւնը պա-
հանջում է որ ուսումնարանին բարո-
յական ուղղութիւն տուող զօրութիւ-
նը կենդրոնացած լինէր, որ մի առար-
կայի դասատուութիւնը բոլոր դասա-
տըներում մի անձի ձեռքում լինէր, և
թէ կարելի է, որ տարրական այլ և այլ
առարկաներն անգամ վարժապետների
որքան կարելի է փոքր թուից աւան-
դուին . . .

Եթէ «օրինակը» մեծ ազդեցու-
թիւն ունի երեխայի թարմ և հեշտու-
թեամբ տպաւորվող ուրիշ վերայ, —
հասկանալի է որ ինքն մանկավարժը
պէ՛տք է «իր օրինակով» առաջարկի ե-
րեխաներին բարոյական «ենեղաշնակ
երեւոյթը»:

Եթէ «օրինակը» երեխայի զարգաց-
ման համար մեծ նշանակութիւն ունի,
— հասկանալի է որ առողջ մանկավար-
ժութիւնը չէ կարող թող տալ «հակա-
սութիւնը» բարոյական օրինակի մէջ,
այլ պիտի պահանջի «օրինակի միու-
թիւնը»:

Ինչքան օգտաւետ է երեխաների
համար կենդանի բարի օրինակը, —
այնքան նորան վնասակար է ուրիշ կող-
մից վատ օրինակի կենդանի պատկերը
. . . Այդպիսի վատ օրինակին երե-
խաները պատահում են իրանց բնկեր-
ների մէջ . . . Ասենք թէ մի երե-
խայ նոր է մտնում ուսումնարան և իր
հետ է բերում բնաւորներից, բնասան-

(1) Մեր բուսաւորեալ մարդիկներից մի
քանիները կարծում են որ տեսչի դիւտար
պարտաւորութիւնն է ուսումնարանի սե-
ղաններից և նստարաններից թող սրբել
տալ, երեխաների տեսրակները և ու-
սումնարանի մատենանք տողել, դասատան
անկիւններից սարգի ոտայնը հանել տալ
. . . և այլն:

կան շրջանում պատուաստած վատ սո-
վորութիւնները . . . Երեխան փչա-
ցած է, նա չէ հնազանդում, նա հա-
կասութիւն չէ համբերում, նա չէ լը-
սում մանկավարժի խօսքը, նա չէ կա-
մենում հետեւել նորա քաղցր հրամա-
նին, նա չէ խօստովանում իր յանցան-
քը, չէ կամենում կրել իր արժանի թե-
թեւ պատիժը: Դուք չարութիւն էք
արել, զնացէք դասատուից դուրս,
դուք արժանի չէք դասին ներկայ
գտնվելու, — ասում է երախային ման-
կավարժը . . . Չեմ ուզում պատաս-
խան է տալիս երեխան:

Մանկավարժը ձեռքից առնում է ե-
րեխային և քաղցր կերպով տանում է
նորան դէպի դուռը, երեխան սկսում է
մանկավարժին խօսել . . . Այն ժա-
մանակ նա երկու ձեռքից է բռնում
նորան, որ չթոյլ տայ երեխայի ան-
սանձ շարժմունքներին . . . երեխան
աղաւտ շարժմունքից զրկած թքում է
մանկավարժի վերայ . . .

Մանկավարժը չը ճանաչելով դեռևս
երախայի բնաւորութիւնը, կարելի է
յարմար չէ վարվել . . . Նա կարելի
է, ուրիշ կերպով կը վարվէր, ուրիշ
միջոց գործ կդնէր, եթէ կարողանար
նախագուշակել երեխային զօրով ձեռ-
քից բռնելու հետեւանքը . . . Բայց
իրողութիւնը կատարվեցաւ. երեխան
անպատկից մանկավարժին ամբողջ դա-
սատան ներկայութեամբ: Մի և նոյն
ժամանակ նա դասատան համար մի
անվայել, վտանգաւոր, վնասակար օ-
րինակ է . . . Մարդը, որ իրան ման-
կավարժութեանն է նուիրել, մարտի-
րոս է, — այդ ճշմարտ է . . . Նա իր
գործունէութեանը նուիրվելով, պիտի
պատրաստ լինի անթիւ միւրաւորանք-
ներ և դժուարութիւններ կրելու . . .
նա կկամենար այդ անսանձ երեխան
ուղղելու . . . Բայց այստեղ յարուց-
վում է նորա առաջ մի գործնական
խնդիր . . . արգեօք այդպիսի մի հը-
րապարակական ծանր վերափորանքից
յետոյ, ամբողջ դասատան համար այդ-
պիսի վտանգաւոր օրինակից յետոյ, —
կարո՞ղ է նա երեխային ուսումնարա-
նում պահել . . . Արդեօք մանկա-
վարժը չպիտի արձակի նորան ուսում-
նարանից . . .

Արտաքին աշխարհի երեւոյթները,
դիւրութեամբ տպաւորվող երեխայի
զգայանները միջնորդութեամբ, նորա
բարոյական զարգացման վերայ մեծ
կրթողական ազդեցութիւն ունեն:

Այդ է պատճառը, որ բարոյական
կենդանի «օրինակը» մեծ ազդեցու-
թիւն ունի երեխայի վերայ:

Արտաքին աշխարհի անկապ, չդա-
սաւորուած, անկանոն երեւոյթները, և
բարոյական օրինակների հակասութիւ-
նը կամ անյարդուութիւնը վնասակար
են երեխայի կանոնաւոր հոգեւոր զար-
գացման համար:

Առողջ մանկավարժութիւնը պա-
հանջում է երեխայի համար «բարոյա-
կան օրինակի միութիւնը»:

Առողջ մանկավարժութիւնը պահան-
ջում է երեխայի համար «բարոյական
օրինակի յարկողութիւնը»:

ՆԻՈՒՆԷ
(Մշակ)

ՍԱՀՆՊ ՂԱԶԷԹԱՆ
ԳԱՐԱՊԵՏ Թ. ՓԱՆՈՍԵԱՆ

Գաղթատա բննչկ մոյհի բազարընտ
Ն. 29 Խոսի խանընտա